

## ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ՏԱՂԵՐ

### ՆԱԻՐԱ ԻՍԿԱՆԵՂԱՐՅԱՆ

Հայկական միջնադարյան գրականության ժանրային հարստության մեջ իր արժեքավոր տեղն ունի բանաստեղծությունը: Մինչև XI դարը բանաստեղծությունը մի նպատակ էր հետապնդում՝ զորացնել, ամրացնել քրիստոնեական դադափարախոսությունը, առաջ ընթել ինքնաուրացման տրամադրություններ և ապաշխարում: Միջնադարյան կրոնական երգերում փառաբանվում էր հոգու անդրչիրիմյան միաձուլումը արարիչ Աստուծու հետ, միաժամանակ երկրային կյանքի մեղսալից պատկերներով քաջալերում էին աշխարհուրացումը: Սակայն «XI–XVII դարերում սկսվում է մի տեսակ վերածնություն հեթանոսականի, մրցում երկրի ու երկնքի, մարմնի ու հոգու մեջ. մարմինն է իրավունք պահանջում. ժողովրդական, ավելի ճիշտ, աշխարհիկ տարրը մտնում է գրականության մեջ, ծնվում են նոր քնարական տեսակներ, նոր լեզվով հորինված, մինչև որ վերջապես մարմինը, հոգու դեմ կռիվը շարունակելով, XVI–XVII դարերում կատարյալ հաղթություն է տանում»<sup>1</sup>:

XIII–XIV դարերում հանդես են դալիս նոր բանաստեղծներ, որոնք ավելի անկաշկանդ են օգտվում ժողովրդական բառ ու բանից: Առավել հիշարժան են Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Երզնկացին, Թլկուրանցին, Նաղաշ Հովնաթանը և ուրիշներ: Նրանց տաղերում առկա են ժողովրդական երգերին բնորոշ աշխուժությունը, պարզությունը, կենսասիրությունը: Թլկուրանցու բանաստեղծություններն այնքան կենսախինդ են, կյանքն անմնացորդ վայելելու այնպիսի անհագուրդ ցանկություններ լի, որ մի պահ թվում է՝ տաղերի հեղինակը մի հասարակ շինական է, ոչ թե կաթողիկոս:

Արևանրման շողշող կու տաս,  
Քանի սիրով դաչերդ ածես.  
Թէ սէր յիշես ու թէ չյիշես,  
Ես կու սիրեմ սըրտովս ըզքեզ<sup>2</sup>:

Տղևի

Թլկուրանցու մասին գրելիս այս բռնկուն ոգին նկատի ունի Ղևոնդ Հովնանյանը, երբ «Միջնադարյան ազգային տաղաչափությունն ուսմկախառն» աշխատության մեջ նկատում է, թե Սսի կաթողիկոսին վայել չէ այսպիսի «երևակայութեան սլացքն»<sup>3</sup>: Միջնադարի այս բանաստեղծը

1 Մ. Ա. Բ. Ե. Դ. յ. Ե. Երկեր. հ. Դ, Երևան, 1970, էջ 498:

2 Հայ դասական քնարերգություն. հ. 2, Երևան, 1986, էջ 169:

3 Ղ. Հ. Դ. Ե. Ե. Ե. Միջնադարյան ազգային տաղաչափությունն ուսմկախառն. Վիեննա, 1911, էջ 28:

տեղծներից շատերն են ներչնչվել ժողովրդական պարզ ու սրտաբեկ մոտիվներով, որի հետևանքով նրանց գործերն ու ժողովրդական երգերը երբեմն չփոթում են մեկը մյուսի հետ: Օրինակ, միջնադարի մեծանուն բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու «Տաղ ի վերայ նորաչէն տուն և այգի ունեցողի և լալու» քերթվածը առ այսօր վիճարանությունների տեղիք է տալիս, և բանասերների մի մասը գտնում է, թե այն ժողովրդական երգ է: Զջմարտությունն այն է, որ և՛ երգիչներն են ազգվել ժողովրդական բանավոր երգերից, և՛ բանաստեղծների տաղերից շատերը ժողովրդականացել, սիրվել են մարդկանց կողմից ու տարիների ընթացքում երգվելով վերամշակվել ու բյուրեղացել:

Ժողովրդական երգերի մեջ շոշափվել են և՛ ժամանակի համար, և՛ ընդհանրապես կարևորագույն հարցեր հայրենասիրական, սիրային, ծիսական, կենցաղային, կրոնական: Արդեն հայտնի է, որ պատմական մանր ու խոշոր անցուղարձեքը իրենց կնիքն են գնում ժողովրդի մշակույթի վրա: Դա առավել ցայտուն արտացոլվում է բանահյուսության մեջ:

Ժողովրդի համար միշտ առաջնային է համարվել հայրենասիրության թեման, և բանահյուսության մեջ ամենից շատ դրա շուրջն են ժողովրդական հուղառատ ստեղծագործություններ ստեղծվել: Հայրենասիրության թեման գերակայում է բանահյուսության գրեթե բոլոր ժանրերում (էպոս, առասպել, գրույց, հեքիաթ, երգ և այլն): Առավել սրտաշարժելի էջներով այն արահայտվել է ժողովրդական երգերի, խաղիկների, տաղերի մեջ: Այդ երգերի մեջ խտացել է մի կողմից ժողովրդի պայքարի ու մաքառման աննկուն կամքը, մյուս կողմից՝ գերության ու պանդխտության ճամփաները բռնած հայի վշտաբեկ սրտի ողոր: Միջնադարյան տաղերում հայրենիքի փրկության թեման իր վրա կրում է տառապած, անվերջ կեղեքումներից ու ստորացումներից հյուսված, բայց դեռ տոկուն ժողովրդի բողոքի մարտակոչը:

XIII դարի արձագանքն է կրում իր վրա «Տաղ ի վերա Լևոն արքայի» երգը: Կիլիկյան Հայաստանի արքա Հեթում I-ի որդու՝ Լևոնի մասին պատմող մի շարք ժողովրդական երգեր են հայտնի, որոնց անդրադարձել է Ասատուր Մնացականյանը իր «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ստվարածավալ աշխատության մեջ և ապացուցել զրանց ժողովրդական ծագումը: Լևոնին նվիրված երգերից մեկին էլ անդրադարձել է Մ. Աբեղյանը: Նա նշում է, որ «Լևոնի կրգր պատկանում է նույն վիպական շրջանին, ինչ որ «Սասնա Ծռերն» իր պատմականության գարգացման վերջին էտապում»<sup>4</sup>: Մեր հայտնաբերած տարբերակը մի նոր նմուշ է, որը գալիս է լրացնելու այդ երգերի շարքը:

Տաղ ի վերա Լևոն արքայի

Շառավիղ ընտիր տոհմին Ռուբինեան,  
Առի՛ւծ անվեհեր, արի՛ ախոյեան,  
Ո՛հ, աղդիս պսակ Լևո՛ն արքայ,

4 Մ. Աբեղյան. Կ. Ա., Երևան, 1966, էջ 495:

Ու՞ր ես, աւա՛ղ, հայր իմ պատուական,  
Ո՛հ, ո՛հ, ո՛հ, հայր իմ պատուական:  
Եգիպտոս քաղաք՝ մահաբեր վիշապ,  
Նտ զքեզ եկուլ, արի՛ ախոյեան,  
Թագ մեր պարծանաց եղև խաւարեալ,  
Արդեօ՞ք փայլեսցի, արի՛ ախոյեան,  
Հայաստան աշխարհ գոչէ՛, հառաչէ՛,  
Փութացի՛ր յօգնել, արի ախոյեան<sup>5</sup>:

Երգն ունի պատմական հիմք: Երբ Եգիպտոսի սուլթանը արշավում է Կիլիկիա, Հեթում I թագավորի որդի Թորոսը զոհվում է, իսկ Լևոնը գերեվարվում: «Պատերազմում Թորոսն ընկավ և Լևոնը գերի տարվեց Եգիպտոս (1266 թ.): 22 ամիս գերի մնալուց հետո աղատվեց և դարձավ Կիլիկիա (1268 թ.)»<sup>6</sup>: Հեթում արքան փրկագին է վճարում և միջնորդելով թաթարական գերությունից ազատում եգիպտացի նշանավոր մի զորավարի, որի դիմաց գերությունից ազատվում է Լևոնը:

Մի շարք երգերում գովերգվում է երբեմնի հզոր Հայաստանի փառքը, նրա քաջագուն զավակների արիությունը: Օտար գերեվարողների ձեռքի տակ հեծծող ժողովուրդը իր փրկությունը երազում է գտնել անցյալի քաջարի հերոսների սխրագործությունների վրա գաստիարակված սերնդի միջոցով:

Հետևյալ երգը, որ ներկայացնում ենք, նվիրված է Հայկազուն գերգաստաններից մեկին՝ Մամիկոնյաններին, որոնց հայրենանվեր գործը դրոշմվել է ժողովրդի սրտում՝ բոցավառելով բազում հայրենասերների:

#### Եղանակ մուղինակ երգերի

Թա՛ղ փառաց մերոց, ա՛յր ցանկալի,  
Գո՛հար անգին, դա՛նձ գովելի,  
Միչտ՝ ի հողիս սէր քո վառի.  
Մե՛ծ նախարար Մամիկոնեան,  
Առի՛ւծ արի, անբարտելի, ե՛կ, ե՛կ, ե՛կ, սէր իմ:

Քաջագուն հօր դու քաջ ժառանկ,  
Որպէս բազէ թև քո երագ,  
Հասեր, հարեր դու զՎախթանգ.  
Մե՛ծ նախարար Մամիկոնեան,  
Առի՛ւծ արի, անբարտելի, ե կ, ե կ, ե կ, սէր իմ:

Դիկրան իշխան՝ օձ բնաձին,  
Քև ընկալաւ մահ գառնակին,  
Ընդ ձեզ օգնեաց աջ միածնին.  
Մե՛ծ նախարար Մամիկոնեան,

<sup>5</sup> Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 3014, էջ 2:

<sup>6</sup> Հ. Ա ճ ա ո ս ն. Անձնանունների բառարան. Հ. Գ, Երևան, 1945, էջ 419, 421:

Առի՛ւծ արի, անբարտեղի, ե՛կ, ե՛կ, ե՛կ, սէր իմ<sup>7</sup>:

Այս երգի մեկ այլ տարբերակ կա № 3014 ձեռագրում (XIX դար), ուրի մեջ նշվում են պատմական կոնկրետ դեպքեր ու գեմքեր:

Ճառ Մամիկոնեաց

Թա՛գ փառաց մերոց, ա՛յր ցանկալի,  
Գոհա՛ր անգին, գա՛նձ գովելի,  
Միշտ ՚ի հոգիս սէր քո վառի,  
Մե՛ծ նախարար Մամիկոնեան՝  
Սուր սայրասուր, Սմբա՛տ իշխան,  
Առի՛ւծ արի, անբարտեղի, ե՛կ, ե՛կ, ե՛կ, սէր իմ:

Աշխարհ մնաց ամպն ահագին,  
Փայլատակեաց շանթ հրածին,  
Զքաջգ Մամկոն՝ վեհ քո նախնին  
Մե՛ծ նախարար Մամիկոնեան,  
Առի՛ւծ արի, անբարտեղի, ե՛կ, ե՛կ, ե՛կ, սէր իմ:

Անճառ քո սուր տէգ բոցեղեն,  
Տապաստ (Տատա՛սկ) յերկիր արկ գՍուրէն՝  
Պարսից զօրուն պետն անօրէն,  
Մե՛ծ նախարար Մամիկոնեան,  
Առի՛ւծ արի, անբարտեղի, ե՛կ, ե՛կ, ե՛կ, սէր իմ:

Դեհրան իշխան՝ օձ բնածինք,  
Քեւ ընկալաւ մահ դառնագին,  
Դու՛ արագիլ, յաջկ հայկազին,  
Մե՛ծ նախարար Մամիկոնեան,  
Առի՛ւծ արի, անբարտեղի, ե՛կ, ե՛կ, ե՛կ, սէր իմ:

Քաջագուն հօր գու քաջ ժառանկ,  
Որպէս բազէ դե քո երագ,  
Հասե՛ր, հարե՛ր գու զվախտակ,  
Մե՛ծ նախարար Մամիկոնեան,  
Առի՛ւծ արի, անբարտեղի, ե՛կ, ե՛կ, ե՛կ, սէր իմ<sup>8</sup>:

Այս երգը ձևաված է VII դարի մեծ հայրենասերներից մեկին՝ Մամիկոնյանների արժանավոր ներկայացուցիչ Ամբատ Մամիկոնյանին: Նա քաջ հայտնի Վահան Մամիկոնյանի որդին էր (Գայլ Վահանի): Երգում նշվող անունները պատմական կոնկրետ դեմքեր են. 606 թվականին Ամբատ Մամիկոնյանը ճակատամարտ տվեց պարսից Սուրեն և Տիգրան

7 ՄՄ, ձեռ. № 6517:

8 ՄՄ, ձեռ. № 3014:

զորավարներին ու հաղթանակեց: Սմբատի կերպարը վիպականացված է ու նրան վերագրվել են վիպական հերոսին բնորոշող հատկանիշներ՝ քաջազնություն, չափազանցված համեմատություններ, արտաքին բարեմասնությունների գովերգում և այլն:

Աշխարհիկ ոգու ներթափանցումը գրականության մեջ բանաստեղծների համար իր հետ բերեց կրոնական ոգուց ձերբազատվելու իրական հնարավորություն: Տակավ առ տակավ բնության ու գեղեցկության հմայքը ճանապարհ է բացում գեպի հոգևորականի սիրտը: Եվ միջնադարի բանաստեղծության մեջ սիրո երգերը սկիզբ են առնում վարդ ու սոխակի այլաբանության մեջ, իսկ կնոջ գեղեցկությունը գովերգվում է կապանքներից ազատված սիրող սրտի տենչանքով: Հետագայում, երբ առաջացավ աշուղական երգարվեստը, այլաբանությունը կորցրեց իր սկզբնական նշանակությունը և միջնադարյան ժողովրդական երգերում սերը, բնությունը հանգես եկան համարժեք բարձրությունների վրա: Սիրո թովչանքն ամենից առավել ընդգծում է գարունը, երբ բնությունը զարթոնք է ապրում, և Աստուծու ստեղծած ամեն էակ լցվում է այդ կենարար, արբեցուցիչ զգացմունքով: «Մարմնին տրվում է իր իրավունքը, դրա հետ սկսվում է և բնության ու սիրո երգը, եկեղեցականի գրած վարդ ու սոխակի պատկերով կամ առանց դրան. բայց բնությունն այլևս այլաբանության համար չէ, այլ ինքն իր համար»<sup>9</sup>:

Շուշան ծաղիկ եմ դաշտաց  
Եւ հարսն ընտիր նարդօսաց,  
Զի տեսանեմ զսէրն իմ բուսեալ  
Ի մէջ նունենեաց: Ա՛րի, ա՛րի, մերձաւոր իմ,  
Սէ՛ր իմ, սէ՛ր իմ, ցանկալի իմ:

Առ քեզ սէրս, համբուրի  
Քոյդ բերանոց բարելի,  
Արդեօք իցէ՞ տեսանել  
Զսուրբ դէմ քո խնդալի: Ա՛րի, ա՛րի, մերձաւոր իմ,  
Սէ՛ր իմ, սէ՛ր իմ, ցանկալի իմ:

Եւ սևացեալ տեսութեամբ,  
Սեաւ եմ դեղւոյս զօրութեամբ,  
Ուրախ լերուք ցնծալով,  
Հրաւիրեցայ խնդութեամբ: Ա՛րի, ա՛րի, մերձաւոր իմ,  
Սէ՛ր իմ, սէ՛ր իմ, ցանկալի իմ<sup>10</sup>:

Սիրո, բնության երգերի կողքին, աշխարհիկ բանաստեղծության մեջ ուրույն տեղ են զբաղեցնում գինու և խնջույքների երգերը: Նաղաչ Հովնաթանը, Սարկավազ Բերդակցին, Մարտիրոս Խարասարցին և ուրիշներ տվել են ուրախության երգերի մի շարք հաջողված նմուշներ:

<sup>9</sup> Մ. Ա բ ե դ յ ա ն. Երկեր. Հ. է, Երևան, 1973, էջ 333:

<sup>10</sup> ՄՄ, ձեռ. № 3014:

«Խնջույքի և ուրախության այսպիսի տաղերին մեծ գեր էր վիճակված՝ նոր շունչ մտցնելու շարականներով և հոգևոր տաղերով գոհացող հասարակական հավաքույթների, ճաշկերույթների ու հարսանիքների կենսուրախ ոլորտները»<sup>11</sup>: Ժողովրդի բերանում այս նյութը, անշուշտ, շոշափվել է և քեֆ-ուրախությունների ժամանակ երգվել են նման տաղեր: Ուրախության լի սեղանին մարգիկ նախընտրում են ներկա գտնվել բարեկամների միջավայրում, գինու թասը մարդու մտքից ու սրտից սրբում-տանում է ամեն քեն ու ոխ:

#### Տաղ խրմելոյ

Արէք մտնունք ի սլաղճանին,  
Ծաղիկ Հնձէ գարնան քամին,  
Սիրով խրմենք զանուշ գինին որո՛վ:  
Աղնի՛ւ քեասերով, սիրո՛ւն սագերով,  
Երգո՛վ, խաղերո՛վ մէջ նէրկիզներուն,  
Մանուշակ նման գէմ վարգենուն,  
Հետ պուլպուլնուն նստցուք, սիրելիք:

Նստցուք առ գետով պարտեղին,  
Թոչունքն գոյն ըզ գոյն խօսին,  
Նրման չպատմէր մէճլիսին որո՛վ:  
Աշխարհս մեզ երանի՛ տան,  
Ծառք ու ծաղկունք ուրախանան,  
Երբ որ բազմիմք մեք ի սեղան որո՛վ,  
Սեղանակից բարեկամաց, ամենեցուն<sup>12</sup>:

Ժողովրդական բանավոր խոսքը հարուստ է ոչ միայն ուրախության, այլև տխրության երգերով: Մատենագարանի № 6517 ձեռագրում գետեղված երգը մտորում է կյանքի ու մահվան մասին: Այս օրինակում արտացոլվել է սիրող մարդու սրտի մորմոքը, որն իր սիրելի էակի վշտի ականատեսն է ու փորձում է մխիթարել, նեցուկ լինել նրան: Սիրելին ծնող է կորցրել և սփոփիչ խոսքերը անօգուտ են թվում:

#### Տաղ ի վերա գոզալին

Դուն ողջ կեցիր, մայրգ մեռաւ, Եազգիւլ, մի՛ լար, մի՛ լար, մի՛ լար,  
Տերը տուեց, Տերը տարաւ, Եազգիւլ, մի՛ լար, մի՛ լար, մի՛ լար,  
Գիտենամ Քայտայ է լալգ, ամենքս գուլայինք, պարէ,  
Չեմ մեղադրէր, ծնօղ մայր է, Եազգիւլ, մի՛ լար, մի՛ լար, մի՛ լար:

11 Ա. ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Նաղաշ Հովնաթան. Տաղեր. Երևան, 1983, էջ 9:  
12 ՄՄ, ձեռ. № 5941:

Խելքըդ կու կտրէ, տղայ չես, քանի մէկ սիրտդ կու մաշես,  
 Կսկիծ է քեզ, գու մատղաչ ես, Եազգիւլ, մի՛ լար, մի՛ լար, մի՛ լար,  
 Քանի մէկ մօրմօքաս տազիս, սիրտդ հովահարի՛ պաղիս.  
 Մտեդ կելնէ՛ կու ծիծաղիս, Եազգիւլ, մի՛ լար, մի՛ լար, մի՛ լար:  
 Սարկաւազեմ Դվնիկ գեղուն, քեզի գովերգեմ գոյնրգգոյն.  
 Տայիմ ողորմիս տամ հոգւոյն, Եազգիւլ, մի՛ լար, մի՛ լար, մի՛ լար<sup>13</sup>:

Միջնադարյան բանարվեստի բերված նմուշները վկայում են այն մասին, որ չնայած կրոնական խստակյաց սահմանափակումներին, վերածնունդի շունչն ու ոգին աշխարհընկալման նոր եզրեր են բացում, և կյանքի օրինաչափությունը պահանջում էր ընդունել, որ երկրային կյանքը հայի համար նույնքան կարևոր է, որքան երկնայինը և մարմնավորը նույնքան արժեքավոր է, որքան հոգևորը:

Բանավոր խոսքի դանձարանից, ցավոք, փշրանքներ են հասել մեզ և զեռ երկար ու մեղվաջան աշխատանք կպահանջվի, որպեսզի առավելագույնս վերականգնվի միջնադարի ծաղկուն բանարվեստի ամբողջական պատկերը:

## СРЕДНЕВЕКОВЫЕ НАРОДНЫЕ АНОНИМНЫЕ ПЕСНИ

НАИРА ИСКАНДАРЯН

### Резюме

Средневековая армянская литература богата лирическими произведениями, песнями, тагами. Наряду с литературными произведениями, в рукописях XVI—XVII вв. находятся и народные, фольклорные произведения. В фольклоре данного периода наряду с такими жанрами как притча, сказание, продолжает развиваться народная лирика. Анонимными поэтами сочиняются различные таги об исторических личностях, о любви, о весельях и застольях, создаются обрядные песни скорби, а также бытовые песни. В анонимных и не изданных материалах армянского фольклора XVI—XVII вв. имеются такие, в которых сохранилась историческая тематика. В них восхваляются выдающиеся личности армянской древности: Мамиконяны, Левон Третий Рубинян и т. д., они представлены как вечно живущие национальные герои. В этот период армянское устное народное творчество, в свою очередь, способствовало развитию средневековой литературы. Это подтверждается тем фактом, что переписчики рукописей сознательно вводили фольклорные произведения в сборники письменных памятников.

## MEDIEVAL NATIONAL ANONYMOUS SONGS

NAIRA ISKANDARYAN.

## S u m m a r y

The medieval Armenian literature is rich with lyrical pieces, songs. Alongside with literary works, in the manuscripts of the 16-17 centuries there are also national, folklore pieces. In folklore of the given period alongside with such genres as parable, legend, continues to develop national lyrics. Anonymous poets compose various songs about the historical persons, love, fun, there are songs of grief, and also household songs. In the anonymous and unpublished materials of the Armenian folklore of the 16-17 centuries there are such, in which the historical subjects were kept. In them the outstanding persons of the Armenian antiquity are eulogized: the Mamikonyans, Levon Third Rubinyan and etc. They are depicted as the eternally living national heroes. In that period Armenian oral national art in its turn contributed to the development of the medieval literature.